

ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻ ՎԱՆՔԵՐԸ

Գ.

ԿԱՐՆՈՅ ՎԱՆՔԵՐԸ

(Շարունակութիւն):

Կարին գաւառը (ո՛չ կուսակալութիւնը) Բարձր Հայքի ամէնէն հռչակաւորն է: «Մասմանքն են՝ հարաւէն հրաբխային եւ բազմակիրճ լեռինքն Փալան-տէօքէն, Եղմուր-տէրէսի եւ Էկէրլի, արեւելքէն Տէվէ սոյնու լեռները... արեւմտեան հիւսիսային կողմն են Սպերոյ եւ Թորթումի վիճակներն եւ բարերգի վիճակը Սարչամայ միւս կողմէն... հարաւային արեւմտեան կողմն ալ կը բարձրանան Դերջանայ եւ Մանանդույ սահմանաձայր լեռները» (Էփրիկեան, Բնաշխ. Բարն. Բ., էջ 299):

1. ԽԱՆԳԱՄԼՈՒՅ Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ ՎԱՆՔԸ

Կարնոյ գաւառին մէջ, Խանգամուց գիւղին մօտ է Ս. Ստեփանոսի վանքը, զոր Պալեան կը միտի Վաղչէնի Ս. Ստեփանոսի հետ միացնել, սակայն այդ անհնար է նկատի առնելով անոնց գտնուած վայրերու հեռավորութիւնը (Բիւզանդիոն, 1902, Թ. 1720. հմմտ. Վաղչէնի Ս. Ստեփանոսի վանքը):

Ս. Ստեփանոսի անուան կը հանդիպինք հետեւեալ տողերուն մէջ՝ «Գրեցաւ (1188ին) սուրբ Աւետարանս ի Կարին՝ յանապատիս, որ կոչի Խանգամուց, ընդ հովանեաւ Ս. Ստեփաննոսի յառաջնորդութեան հաւր Կիրակոսի...» (Բիւզանդիոն, 1902, Թ. 1682. Լալայեանց, Յուց. հայ. Ձեռ. Վասպ., էջ 78, ուր գրուած է «Խանգամուց»): — Բարձրալի էր այս հին վանքին մասին աւելի տեղեկութիւն ունենալ:

2. ԽԱՉԿԱՎԱՆՔԸ

Կարնոյ հիւսիսային կողմը, անկէ գրեթէ հինգ ժամ հեռու, Արծըթի գիւղին աւելի մօտ, Խաչկավանք գիւղի մէջ բարձրացած է համանուն Խաչկայ կամ Ս. Խաչի վանքը: Հաւանականաբար նախապէս վանքը շինուած է եւ յետոյ անոր շրջակայքը բնակութիւններ հաստատուած են եւ սկիզբ առած է Խաչկավանք գիւղը (Յակոբ Կարնեցի, Տեղագրութիւն Վեր. Հայոց, էջ 45. Ինճիճեան Հ. Ղ., Նոր Հայաստան, էջ 76. Միքայիլեան, Ուղե-

ւորութիւն, Գ., էջ 175—177. Էփրիկեան, Բնաշ. Բառարան, Բ., էջ 148):

Ինչպէս Կարնոյ միւս վանքերը նաեւ այս եւս պարսպապատ է: Բարի մը վրայ արձանագրուած է՝ «Ողորմութեամբն եւ օգնականութեամբ... աշխատութեամբ եւ ջանիւ իրզորումցի Գալայեան Ստեփան վարդապետին առաջնորդին սրբոյ Խաչկավանքից շրջապատ պարիսպքն ի հիմանէ... շինեցաւ... ԽՄԼէ»:

Խաչկավանքի տաճարն ունի 8 մետր երկարութիւն եւ 5.30 լայնութիւն: Շինուած է հաստ ու ամուր որմերով: Արեւելեան որմին վրայ միայն բացուած են քանի մը հատ բարձրադիր փոքր լուսամուտներ: Տաճարը ունի բարձր բեմ մը, որուն առջեւ կը բարձրանան կիսարտրոնակ կամարակապ բաժանումներ: Մէջ տեղի կամարին ներքեւ կառուցուած է պարզ քարակերտ խորան մը, իսկ աջակողմեան եւ ձախակողմեան բոլորակներն իրրեւ աւանդատուն կը դործածուին: Տաճարին ներքինը շատ պարզ է: Որմերուն վրայ ուշադրութիւն դրաւոյ քանդակուած քար ու դարձ չկայ: Այս պարզութիւնը եկեղեցւոյն հնութիւնը կը ցուցնէ, վասն զի եթէ նորոգուած կամ վերաշինուած ըլլար եւ կամ նոր, անտարակոյս որմերուն մէջ խաչքարեր հաստատուած կ'ըլլային, ինչպէս ուրիշ գիւղերու մէջ վերականգնուած նման հաստատութիւններու մէջ ակներեւ կը տեսնուի (Քօսեան Հ. Յ., Բարձր Հայք, Բ., էջ 45):

Խաչկայ վանքի խաչքարերէն մէկուն վրայ կը կարդացուէր՝ «Ի թու ՈՂՂ կանգնեցաւ խաչս ի յիշատակ տէր Թորոսու Դերջանա եպիսկոպոսի» (Բարձր Հայք, Բ., էջ 41. Սարգիսեան, Տեղագրութիւնք, էջ 81): Իսկ տաճարին հարաւային կողմը կայ շիրիմ մը հետեւեալ փորագրութեամբ՝ «Այս է շիրիմ եւ դամբարան հրաւիրակի սուրբ Սաղիմեան, ամ ԼԲ. ունի, յոյժ ցանկալի, եպիսկոպոս արք պանծալի, տէր Մատթէոս պետ բարձալի. յԱղբիանեանն Պոլսեցի, կերտի տապանս այս արդելի, ձեռամբ որդւոյն իւր Գրիգորի, եւ հոգեսուն իւր գաւակին, թվ. ԽՄԺԱ. Յունվարի ԺԱ. ին» (Բարձր Հայք, Բ., էջ 42—43):

Խաչկայ վանքը բացի միաբաններու սենեակներէ՝ ունէր նաեւ ուխտաւորներու բնակավայրեր:

Յովհ. Վաղարշակեացին կը գրէ.

«Աստի (Երկայնիստ գիւղ) շեղ ընդ հիւսիս արեւելեան քառորդ ժամաւ հեռի է վանք Խաչի, ամբացեալ ի դոզ պատասեալ լեռանց կառուցեալ է տաճար վանացս կաթողիկէի, ներփակեալ ի կիսակարակն ամբողինդ պարսպով, ունելով դրունս երկուս, մինն՝ մեծ եւ լայն ի կողմանէ յարեւելից եւ միւսն՝ նեղ եւ անձուկ ի հիւսիսոյ... ի ներքս ի պարիսպ վանաց ի կողմն հարաւոյ ի մի շարս զետեղեալ են 4 սենեկունք եւ ի պատուածս սենեկաց յարեւմտեան կուսէ կանգնեալ կայ արձան անեալ յայլ տեղւոյէ: Յաւիմ ընդ այն զի արձանագրութիւնք խաչիս աւերեալ էին համայնգամայն:

«Եօթն եւ տասն սանդխօք ի վեր բարձրացեալ ի տաճար վանացս՝ ի մտանէ ի դուռ անդր տաճարին, իսկ ի հարաւային կուսէ առ որմովք տաճարին կայ դամբան Մարտիրոս անուն եպիսկոպոսի ուրումն նուիրակի սրբոյ Երուսաղէմի Աղբիանուպոլսեցւոյ, արձանագիր դամբանաքարիս գրեալ էր յոճ ոտանաւոր եւ երկաստիճան կոթողիւ կանգնեալ խաչ ի վերայ հանդուցելոյն:

«Ի նեղ դրանէ զոր ասացաք մտեալ նախ ի դաւիթ տաճարին, ապա չորիւք աստիճանօք ընդ այլ դուռն ինչ մտանի ի տաճար անդր վանացս, որոյ վաղեմնաչէն նսեմ հնութիւնն ակն յանդիման տեսանի...» (Ճանապարհորդութիւն. Մարտիրոս եպիսկոպոսի մասին տես Աղանունի, Միաբանք եւ Այցելութք, էջ 266):

Աւանդութիւնը այս վանքին անունը կը կարծէ ծագած ըլլալ հոն զետեղուած Ս. Խաչի մասունքին հետեւանքով, սակայն այդ բոլորովին սխալ է: Այդ պարագային պէտք էր Ս. Խաչի կամ Ս. Նշանի վանք կոչուիլ: Խաչկայ վանք կոչուած է յանուն այն սրբակեաց Խաչիկ հօր, որուն անունովն ուրիշ վանք մըն ալ կայ Բարձր Հայքի մէջ (հմմտ. Խաչիկ հօր վանքը):

Նաեւ աւանդութեան համեմատ այս վանքին հիմնարկութիւնը Հերակլ կայսեր օրերուն եղած է¹: Սակայն գրաւոր տեղեկու-

¹ Կարնոյ առաջնորդարանին մէջ գտնուած Խաչկայ վանոց պատմութիւնը եւ կոնդակը կը հաղորդեն թէ՛ Հերակլ իր զինուորները կերակրող բարերար տիկնոջ մը Ս. Խաչի մասունք մը կը նուիրէ: Տիկնոջ վանք մը կը շինէ եւ անոր եկեղեցւոյն մէջ կը հանդուցնէ ստացած անդին գանձը (Բարձր Հայք, Բ., էջ 49—56. Յակոբ Կարնեցի, Տեղագր. Վեր. Հայոց, էջ 45):

թիւնները նորագոյն դարերէ են: 1488ին «Ի քաղաքիս Արզրումիս ի վանքս, որ կոչի Խաչկայ վանք ընդ հովանեաւ սուրբ Յարութեան, սուրբ Աստուածածնի, Ս. Սարգիս զաւարավարի, Ս. Թադաւորի, յառաջնորդութեան վանացս տէր Ներսէս եպիսկոպոս եւ ի հայրապետութեան Մկրտիչ արեղին» Սարգիս Գանձարան մը կը գրէ (Ակիմեան, Հաւաք. Յիշատ. Հ. Պոտուրեանէն): Շատ ժամանակ յետոյ կը գրուի Գիրք Հարցմանց «Ի յերկիրս Կարնոյ, որ է Թէոդուպոլիս, որ այժմ կոչի Աղբում, ի Խաչկայ վանք ի դուռն սուրբ Յարութեան եւ սուրբ Թադաւորիս»: Գրողն է Գինոս, որ կը մաղթէ յիշել «զհոգեւոր հայրն իմ զՊաւղոս եպիսկոպոսն եւ զՊետրոս եպիսկոպոսն»: Կը վերջացնէ 1629ին (Ակիմեան, Հաւաք. Յիշատ. Ձեռ., Երեւան, 620):

Գինոս կամ Գինէոս Խաչկավանքով հետաքրքրուող եղած է:

Հետեւեալ յիշատակագրութեանէն կ'իմանանք թէ՛ Խաչկայ վանքը աւերուի ենթարկուած է, սակայն վերականգնուած:

«Յիշատակ է Աւետարանս Արզրումցի դուրկար մահտեի Դիւանին իւր կողակցոյն Ղիմաթին, որդոցն Պօղոսին եւ Փիլիպպոսին՝ դատերացն Դօրվաթին, Չարդարին, Անախասին, Արմաբսին, Նազուրին եւ ի դուռն սուրբ Խաչկավանքի եկեղեցւոյն: Այս սուրբ Աւետարանս տվեալ էր յառաջմէ տէր Գինէոսին ժամանակէն եւ յետոյ աւերեալ էր վանքն, ոչ ժամ, ոչ պաշտօն, ոչ պատարագ կատարէին, վասն այսմ դատճառի մղտեի Դիւանն տարաւ իւր տունն պահեաց մինչեւ Լ. տարի, յետոյ զալայչի Մնացականի որդի տէր Ստեփաննոս աստուածարանութեան վարդապետն, առաջնորդ նստեալ սուրբ վանքն, շինեաց եւ հաստատեաց զմիաբանքնս եւ մեք տեսեալ զշինութիւն վանքն եւ հաւատացինք նորա, յետոյ մաղտեի Դիւանն հանդուցեալ էր, յետոյ իւր կողակցի Ղիմաթն եւ իւր որդիքն եւ դատերքն միաբանեցանք կրկին յիշատակ տվինք սուրբ Աւետարանս Խաչկավանքն, որ է Թէոդուպոլիս ի քաղաքն Կարնոյ, որ այժմուս Արզրում ասեն, ի ժամանակին Ըստամպոլցի տէր Խաչատուր աստուածարանութեան վարդապետն առաջնորդ էր նստեալ Արզրումայ, նա եւս գիտակ է եւ վկայ որ ես Պօղոս Դ. Գլուխ Աւետարանիս ներքեւ կնքեալ եմ իմ ձեռովս... Ով որ առաջնորդ լինի տարին Ա. անգամ սուրբ սեղանն պատա-

Վանքին պարիսպէն դուրս կը գտնուի գերեզմանոցը: Կան դամբանաքարեր: Առաջել վարդապետի շիրիմաքարին վրայ կը կարդացուի՝

Այս է տապան եռամեծի
Առաքել վարդապետի
Սրբոյ ուխտիս գիտապետի
Որոյ ձեռամբ նորակերտի
Բոլոր սագերս ընդ գմբեթի
Եկեղեցին պայծառ ծաղկի
Եւ նորաչէն պարիսպ կապի
Սակս տեղուցս հարկաւորի
Տասնութեամբ առաջնորդի
Ապա առ Տէր վերահանգչի
Մարմին ստոր վիմիս դընի
Հողին որ եան վերաչի
Այս թույս թուականի
Յարեթական մեր տոմարի
Հազար հարիւր ութսունորդի
Հնգօք ամօք աւելորդի
Հանդիպողքդ տուք ողորմի,
Վասն զի մերս այսպէս լինի
Ողորմ խնդրո յոյժ կարօտի»:

Պատուանդանին վերի կողմը գրուած է այսպէս՝

Եւ տապանս այս հանդերձ խաչիւ
Ձեղեկայ բազմաշխատ պետիւ
Որ գհեա գործոց գիշեր եւ տիւ
Թւին ՌՃՁ ութիւ, կազմեցաւ սովիւ
(անդ, էջ 115—116) եւ Բիւրակն, 1899, էջ 442):

Սաչքարի մը վրայ կայ լոկ «Թորոս երէց» (հմտ. Հռիփսիմեանց անապատը) իսկ ուրիշ խաչքարի մը վրայ՝

Յովասափ վարդապետի,
եւ սուրբ ուխտիս գիտապետի,
Մարմին սորա աստ ամփոփի
Որք հանդիպիք տուք ողորմի
Տէր հատուցէ փոխանակի
ԹՎին Հայոց ՌՃՂԵ (անդ, էջ 117):

Հինձքի Կարմիր վանքի հիմնարկութիւնը հին է: Աւանդութիւնն անոր հիմնադիրը կը հռչակէ Ներսէս Պարթեւ եւ առաջին վանահայրը կամ առաջնորդը գիւտէ Սաղ (Բիւ-

րակն, 1899, էջ 444, Բիւզանդիոն, 1901, Թ. 1447, Փոռնը 1898, Թ. 2432, հմտ. եւ Բազմապէս, 1907, էջ 473—474), մինչ իրականին ժ. դարուն Սարգիս վարդապետի ձեռքով հիմնուած է: Ասողիկ կը գրէ՝ «Նոյն-գունակ եւ նոյն օրինիւ վանքն Հնձուց ի Կարին գաւառի ի ձեռն հօրն Սարգսի ամենայն օրինօք լցեալ» (Ասողիկ, Պոմ. Պետերբուրգ, 1885, էջ 176): «Նոյն գունակ» բառով պէտք է հասկնալ թէ Հինձքի վանքը այն պարագաներու տակ եւ միջոցներով հիմնուեցաւ, ինչպիսի էին կամրջաձորի, Հոռոմոսի եւ ուրիշ վանքերու, որոնք այդ դարուն (ժ.) հիմնարկուեցան. իսկ «նոյն օրինիւ» ով իմանալու է այն կանոններով ու սովորութիւններով, որոնք ասոնց մէջ կային: Այդ կանոնադրութիւններու խիստ պահպանուող Սարգիս եւ վանքը «ամենայն օրինօք լցեալ» եղաւ: Հոն ծաղկեցաւ ու հռչակուեցաւ անուանին Յովսէփ, «առաջնորդ ուխտին, որ Հնձուցն անուանի վանք ի Կարին գաւառի»⁵ (անդ, էջ 185): Չունինք ամենեւին՝ հաստատուն ապացոյց ընդունելու որ հոն՝ զարգացած են՝ Անանիա Նարեկացի, Խոսրով Անձեւացի, Գր. Նարեկացի, Գր. Մագիստրոս, Գր. Վկայասէր, Արիստակէս Լաստիվերտացի, Պետրոս Գետադարձ եւ նոյն իսկ աւելի կանուխ Մովսէս Խորենացի եւ անոր ընկերներէն (Բիւրակն, 1899, էջ 445. Բիւզանդիոն, 1901, Թ. 1447): Սակայն այն իրողութիւն է որ Կարմիր վանքը իր հիմնարկութեան առաջին շրջաններուն կ'ունենայ ծաղկալից ծաղկաւէտ կեանք մը եւ ապա քաղաքական աննպաստ, բայց ազդեցիկ պարագաներու տակ կ'անշքանայ, սակայն ետքէն նորէն կը վերակենդանանայ, բայց առաջին վիճակին երբեք չի բարձրանար: Այն տեղ Գր. Մագիստրոսի օրով կը փայլի իր գիտութեամբը Գրիգոր Տելեոէս (հմտ. Գր. Մագիստրոսի թղթերը, էջ 89—96 եւ 300—302. հրտ. Կոստանեանցի): «Կարմիր վանք» յիշատակութեամբ կան շատ մը յիշատակագրութիւններ, սակայն անոնցմէ մեծազոյն մասը համանուն ուրիշ վանքերու կը հայի: Կայ մաս մըն ալ որ տարակուսական է թէ ո՛ր Կարմիր վանքը կ'ակնարկուի: Ստուգապէս Հինձքի Կարմիր վանքը նկատողութեան առնուած է հետեւեալներու մէջ:

⁵ «Եւ Յովսէփ, որ Հնձուց էր նախագահ» (Ա. Լաստիվերտացի, Պոմ. Վենետիկ 1901, էջ 13):

Աւետարանի մը յիշատակագրութեան մէջ կայ. «Փառք... Արդ գրեցաւ սուրբ Աւետարանս ի սուրբ անապատս, որ կոչի Կարմիր վանք ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս եւ սուրբ Կարապետիս եւ սուրբ Հրեշտակապետացն Գարրիէլի եւ Միքայէլի, ի թվականիս Հայոց ՌՂԱ ի յառաջնորդութիւն սուրբ ուխտիս Աստուածատուր եպիսկոպոսիս եւ այլ միեղէն եղբարցս ԺԼ անձն կրանաւորիս⁶, որ կան յայս քարաժեռ անապատիս ձեռամբ անարժան Վարդան արեղի եւ Ներսէս աշակերտի...: Յիշատակ է Աւետարանս մահտասի տէր Աստուածատուրին, հաւերն Առաքելին եւ մաւրն Հերիքին եւ հաւերն Սարգիսի տէր Ղուկասին... եւ անցեալ ազգականին Մարտիրոս եպիսկոպոսին եւ Խաչատուր եպիսկոպոսին եւ միւս Կիրակոսին եւ անցեալ ննջեցելոցն եւ եղ ի գիւղն Յուշպակ ի դուռն սուրբ Թորոսին ի քահանայութիւն տէր Իսրայէլին եւ սարկաւազութիւն Միրաքին՝ ծաղիկ ոստի խաչին»: 1683 Մարտ 31ին Ղազար Մովսէսեանց կը գնէ այս աւետարանը «յանօրինաց» եւ կը նուիրէ «ի Հնձուց վանք սուրբ Աստուածածնին» յԱրգրում (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. Երեւան, 152 եւ Պոտուրեան, Աւետ. յԱխալցիս 1642էն):

Ժողովածուի մը մէջ կան ժամանակագրական տողեր, որոնցմէ են նաեւ հետեւեալները՝ «Ի Կաֆայ քաղաքի ի սուրբ խաչ եկեղեցի գգիրս ծրեցի ի ՌՃԿ (1711) թուի ի ԺԱ Սեպտեմբերի ձեռամբ իմո Գրիգորի տրուպ եւ նշքեհ բանասիրիս...: Ի Հնձուց վանքն գրեցաւ սակաւ բանս ձեռամբ իմո Գրիգորի մեղապարտ վարդապետի (Ակինեան, անդ, էջմ. 737):

Բաւական կարեւոր տեղեկութիւններ կը բովանդակէ հետեւեալ յիշատակագրութիւնը՝ «... Յիշեցէք զԹողաթցի Պետրոս վարդապետն, զնացեալ եղեւ ի Հոնաց աշխարհն եւ տեսալ... գրկիկս ի Կողով ծովահայկաց քաղաքն, որ Իգնատիոս ոմն վարդապետէ մնացեալ եւ ինքն անդ վախճանեալ, եւ ես անդանօր տեսի Եղեկիկ զրազիրն... Էտու գրել գգիրքս...: ԹՎին ՌՃԿԳին եկի Ստամպոլ՝ յղեցին գգիրքս: Դարձեալ նուր-

⁶ Հմտ. Սրբանձեանց, Թորոս Աղբար, Բ., էջ 329—330):

բակ եղէ սուրբ Երուսաղէմայ ի Կարնոյ քաղաքին եւ յաշխարհին թաւրիզոյ եւ մեծին Սպահանայ, եկի յԱրգրում, Հնձուց վանից՝ առաջնորդ տէր Առաքել վարդապետն միշտ առ միշտ փափագանաւք էստ զօրինակն եւ յղեաց ի յերկիրն Խորձիւնի, որ է Կեղի գրազիր տէր Մելքոնին եւ գրել զօրինակն սորին այսմ փափաքողի տէր Առաքելին...» (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. Ձեռ. Էջմիածին, Թ. 1181, Լուծմունք Սոդոմոնի Առակաց):

Հոս յիշատակուած Առաքել վարդապետը Հնձուց վանքի շինարար առաջնորդներէն է⁸, ինչպէս իր տապանաքարին վրայ գրուած թղթով նշանակուած է: Նա գուցէ յաջորդն էր Մարգար եպիսկոպոսին, «որ եւ ունէր ընդ իւր եւ գերիս արեղայս եւ հնգետասան մանկունս յուսումն դպրութեան ի պէտս քահանայութեան», որ եւ Մխիթար Սերաստացին սիրով կը հիւրընկալէ եւ կղերականներու դաստիարակութիւնն անոր կը յանձնէ (Ազոնց, Վարք Մխիթարայ Սերաստացոյ, Գլ. ԺԹ. հմտ. Բազմապէս, 1907, էջ 475: Մակար եպիսկոպոսի մասին՝ Հանդ. Ամս. 1949, էջ 387—388): Իսկ Առաքելի յաջորդներէն են Եղիա, Յովասափ եւ Յակոբ: Անոր յաջորդներէն Ղեւոնդ եւ Մկրտիչ Ջանք չեն խնայեր աւերուած վանքը վերականգնելու եւ անոնց ջանքերը յաջողութեամբ կը պատկուէին: Վերջին շրջաններու առաջնորդներու անունները մեծ մասով ծանօթ են: Հ. Գօսեան կը բաղձայ Հունձքի կամ Հինձքի Կարմիր վանքի վանահայրներու ցանկը ունենալ: Կը գրէ՝ «Վանքիս մէջ զժրախտարար չի գտնուիր մեր փնտոածը, ուստի զիմեով զարձեալ քաղքին առաջնորդարանի գիւտանատուն կը գտնենք ցանկ մը անուանց...: Յատալ կը բերենք սոյն ցանկը, ինչպէս որ գրուած է թուականներով հանդերձ:

Ի Հինձք գիւղ Կարմիր վանաց վանահայր միարանք՝

⁷ 1683ին Ղազար Մովսէսեանց Աւետարան մը կը գնէ «յիշատակ ի Հնձուց վանքն սուրբ Աստուածածնին յԱրգրում» (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. Ձեռ. Հ. Պոտուրեանէ):
⁸ Նա՛ Կարմիր վանքի միարան եւ ապա եպիսկոպոս Գէորգ Եղեկեացին ժողովարարութեան կը հանէ (Գիւտ, Գ., էջ ձմթ. հմտ. Հանդ. Ամս., 1913, էջ 386—392): — Մահապ Ահապին Կարմիր վանքի մէջ կը մեռնի (Կիւլեսէրեան Բ. Վ., Յովհաննէս Կոլոս, էջ 72):

Մարգրիտ վարդապետ . . . 936
 Յովսէփ եպիսկոպոս . . . 1020
 Մարգար եպիսկոպոս . . . 1697
 Առաքել վ. 1719—1736
 Եղիա վ. 1739
 Յովասափ 1746
 Յակոբ 1760—1770
 Ղեւոնդ 1770⁹
 Մկրտիչ վ. 1800
 Յովհաննէս եպ. 1805—1829
 Գրիգորիս եպ. 1831
 Առաքել վ. 1849—1850
 Տիրատուր վ. 1750—1852
 Մկրտիչ վ. Մասնավանուց 1853—1859
 Պետրոս քհ. Կարնոյ . . . 1860—1865¹⁰
 Զաքարիա քհ. Հնձուց . . . 1865—1892
 Տ. Կորիւն Վ. Էվլիարամեան 1892—1899

Յայտնի է որ այս ցանկը պակասաւոր է, սակայն դայն անթերի լրացնելու անկարող ենք: Պայեանի վերջին շրջաններու առաջնորդներու կազմած ցանկն ալ գոհացուցիչ չէ (Բիւզանդիոն, 1901, Թ. 1447): Կարմիր վանքէն էր Գէորգ Վ. Եւզոկիացին, որ Յակոբ Ծամախեցիէն եպիսկոպոս կը ձեռնադրուի 1759-պայմանով միշտ նոյն վանքին մէջ մնալու (Գալէմքեարեան Հ. Գ., Կենսագրութիւններ երկու հայ պատրիարքներու եւ տասն եպիսկոպոսաց (Ա.) Վիեննա 1915, էջ 100):

Կարմիր վանքին միաբաններէն եղած է նաեւ Կարապետ եպ. Մելիքեան Հնձեցին, որ Թիֆլիզի արքեպիսկոպոս եղած է: Նա տաղասաց է եւ ունի տաղ մը՝ «Երգ վերստին ի նոյնոյ Կարապետ ճնչին փաղերայէ հնձաց-ւոյ, սակս չափիւղաղոյն կարմրագգեսա չքնաղաչէն սրբոյ վանիցն Հնձուց: Եւ ոչ հասեալ ի աւարտն ի գրազմանէ սփոփչակուուր լեալ ոչ կատարեալ ի աւարտ անէլ:

«Կարմրագգեսա գեղեցկագով սուրբ տաճար, Կերտեալ խորան բարձրագիտակ եւ անձառ...»:

(Հ. Յ. Տաշեան, Յուլյակ, էջ 458—462. Հանգ. Ամս. 1913, էջ 587—607. հմմտ. Գալէմքեարեան, Կենսագրութիւններ, Ա.,

⁹ Հմմտ. Ժամանակ, 1865, էջ 189:
¹⁰ 1795ին Հնձուց վանքը կ'այցելէ Գր. Օշականցին (Ոսկեան, Մայր ցոյց., Բ., անտիպ, Թ. 884. թղ. 21բ):

Վիեննա 1915, էջ 148—182): Գեղեցիկ է մանաւանդ՝ «Գովեստ արեւրասխաուն ի սուրբ Աստուածածնի տաճարն մականուամբ Կարմիր վանք եւ Հնձուց կոչեցեալն... ի կարմրաղոյն քարանց յորինակերտեալ, տաճար չքնաղ, դարմանահարչ եւ օրհնեալ Հնձուց վանք դու մականուամբ վերածայնեալ, արի՛ արի՛, արի՛, սէր իմ փրկեա» (Հանգ. Ամս. 1913, էջ 595):

Հինձքի վանքը ինչպէս կը տեսնուի բաւական լաւ շրջան բոլորած է, բայց երկրաչարժ մը դայն գրեթէ քարուքանդ ըրած է եւ նորէն վերականգնուած (հմմտ. վերը եւ տես Տաշեան, Յուլյակ, էջ 460—461): Տիրամօր տօներուն ուխտաւորները հոն կը խոնուէին: Անոնց համար շինուած էին բնակարաններ, երբեմն անշուք, բայց ապա աւելի խնամուած (Մարգրիտեան, Տեղագրութիւնք, էջ 80, Բիւզանդիոն, 1901, Թ. 1447) ճոխացուած էր թեմով՝ «Սորա թեմք են քանի մի գիւղորէք ի դաշտին էրզրուումայ եւ գիւղն Արծաթի եւ Թորթում քաղաք» (Ինձիճեան, Նոր Հայաստան, էջ 76) եւ նոյն իսկ Ախալցխա (Գալէմքեարեան, Կենսագրութիւններ Ա., էջ 105): Ժամանակ մը Կարնոյ առաջնորդները հոն նստած են:

Ունեցած է ընդարձակ հողեր եւ ջրաղաց եւ անոնց հասոյթէն նոյն իսկ որբերու բաժին հանուած է¹¹ (Բիւզանդիոն, 1899, էջ 445—449, Բիւզանդիոն, 1901, Թ. 47, Արաբատ, 1898, էջ 161, Փոնտը, 1898, Թ. 2432): Սակայն երբեմն պարտքը ծանրացած է անոր հողածուներու ուսին եւ 1807ին Միքսա վարդապետը Յովհաննէս վարդապետին հետ հանդանակութիւն կ'ընէ (Քօսեան Հ. Յ., Յուլյ. հայ. Ձեռ. Արծնեան վարժարանի, Թ. 842, անտիպ):

5. ՀՌԻՓՍԻՄԵԱՆՅ ԱՆՊԱՍԷ

Մօտ Հինձքի: Յակոբ Կարնեցի կը գրէ՝ «Եւ ունի ձորն անապատ կուսանաց եւ ձըղնաւորայն եւ բարեհամ աղբիւր եւ վայելուչ վայրք, որ Հռիփսիմեանց կոչեցաւ, որ է

¹¹ Կարապետ եպիսկոպոսը վանքին դպրերուն հետ շարաշար վարուած է (Բիւզանդիոն, 1899, էջ 445): — Կարմիր վանքի մասին հմմտ. Էփրեկեան, Բնաշխ. Բառարան, Բ., էջ 330—331, բայց մանրամասնորէն Քօսեան Հ. Յ., Բարձր Հայք, Բ., էջ 103—121). հմմտ. նաեւ Բիւզանդիոն, 1901, Թ. 1447. Ալիշան, Տեղեկագիր Հայոց Մեծաց, Վենետիկ 1855, էջ 37. Միքայիլեան, Ուղեւորութիւն, Կ.Պ. 1885, Գ., էջ 471—175 եւ վերջիւշեալ գրութիւնները:

մինչեւ ցայսօր» (Տեղագր. վեր. Հայ., էջ 45): Աւանդութեան համեմատ ժամանակ մը այս կողմերը Հռիփսիմեանները բնակած ըլլան (Քօսեան Հ. Յ., Բարձր Հայք., Բ., էջ 122): Արդ մնացած են անապատը յիշեցնող խորանի կամարաքարը, գերեզմանաքարեր եւ խաչքարեր: Միայն քարեր, որոնք սակայն կը խօսին եւ կը վկայեն թէ հոն՝ երբեմն ետուն կեանք մը գոյութիւն ունեցած ըլլայ: Խաչքարի մը վրայ գրուած է՝ «Թորոս երէց» (Բիւզանդիոն, 1899, էջ 449):

6. ՄԻՔԱՅԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ

Յակոբ Կարնեցին կը գրէ՝ «Եւ մօլլայս այս (Վանի) յամբ էառ թագաւորէն եւ առաքեաց ի վերայ փաշային Արզրուումայ եւ առին զեկեղեցին, որ ի մէջ բերդին անուն սրբոյն Սահախանուսի եւ արարին մզկիթ եւ եղեւ սուգ մեծ աղբիս Հայոց, որ մնաց մէկ եկեղեցի պարսպէն ի գուրս անուն սրբոյն Աստուածածնայ, զոր հիմնարկեալ է Մեսրոպայ վարդապետին եւ շինեալ է ձեռամբ Գաւրիթ Անյաղթին եւ Մովսէսի Քերթոյին եւ առաջմանէ հռչակաւոր վանք լեալ է քաղաքիս ի ժամանակս մեծ կայսերն Կոստանդնուպօլսի փոռուս Թէոփոսի, որ դպրոց է եղեալ եւ միաբանեկեցաց տեղիք, որ այժմ սուրբ Աստուածածին կոչեն» (Տեղագրութիւն Վեր. Հայոց, էջ 35—36):

Յակոբ Կարնեցին կը պատմէ նմանապէս թէ՛ ինչպէս գողերը Ս. Աստուածածնի եկեղեցի-վանքը կը մտնեն եւ գողութիւն կ'ընեն, սակայն ետքէն բոնուելով շարաշար կը պատժուին եւ կը յաւելու՝ «Այս եղև ի թուսկանութեան մերում Ռձի. առաջնորդութեան Կարնոյ քաղաքիս Սարգիս վարդապետին, որ բազում շինուածով զարդարեաց զվանքս մեր» (անդ, էջ 53—61):

Միտրան Ս. Աստուածածնի հովանիին տակ բաւական թուով ձեռագիրներ կը գրուին (Ծագիկ, 1890, Թ. 35, Յովհ. Վաղարշակեացի, Ճանապարհորդութիւն, Կ. Պոլս, 1870, էջ 23):

7. ՄՈՒՏՈՒՐԿՈՒ Ս. ԼՈՒՍԱՆՈՐԶԻ ՎԱՆՔԸ

Կարնէն մէկուկէս ժամ հեռու է Մուտուրկայ գիւղը, որ անուանի եղած է իր արեւելեան կողմը բարձրադիր բլրակի մը

վրայ շինուած վանքովը: Այդ վանքը Ս. Լուսաւորիչ անունը կը կրէ¹²:

«Գեղեցիկ է վանքիս դիրքն ու հաճոյատեալը...: Անոր առաջակողմը քարընկէց մը հեռու կանգուն մնացած կը տեսնուի մարդաչափ մեծութեամբ հին խաչքար մը, որուն շուրջը կը տեսնուին նաեւ ուրիշ խաչքարեր: Յանցելուսն վանքին գերեզմանատունն եղած է՝ այս տեղը» (Բարձր Հայք Բ., էջ 138—139):

Վանքը բարձրադիրայ է եւ բարձրանիստ (Սարգիսեան, Տեղագրութիւնք, էջ 80): Պարխայէն ներս կայ բակ մը, ուր շինուած են աւազան մը եւ աղբիւր մը: Վերջինիս վրայ մարմարեայ սպիտակ քարի մը վրայ գրուած է՝ «Յիշատակ է բարեհամ աղբիւրս այս Գղեցի Իսահակ վարդապետին եւ հոգեւոր ծնողին իւրոյ Տեառն Յովհաննիսի մեծի վարդապետին Կոստանդնուպօլսոյ Պատրիարքին, թվին՝ ՌձԳ»:

Ս. Լուսաւորիչի վանքը օժտուած էր երեք եկեղեցիով՝ Ս. Լուսաւորիչ, Խորվրայ եւ Ս. Սարգիս անուններով: Առաջինը բաւական մեծ էր ու խաչածեւ եւ ունէր շրջրակ գմբէթ մը: Ներքինը՝ շատ պարզ: 1898ին նորոգութիւն կը տեսնէ, բայց 1911ին կ'այրուի (Բիւզանդիոն, 1898, Թ. 510):

Երկրորդ եկեղեցին կամ աւելի ճիշդը մատուցը խոր գուր մը ունի, զոր ժողովուրդը Խորվրայ կը կոչէ: «Խորվրայս ունի 2.75 սմ. խորութիւն, եւ 1.60 սմ. լայնութիւն, բոլորակ հորի մը պէս, քարահիս պատերով, կրնայ բովանդակել 10 հոգի քովէ քով կենալով, վրան ունի փայտաչէն գոց դռնակ մը, զոր վեր վերցնելով՝ փայտաչէն սանդուխի մը վրայէն վար իջնալ կարելի է (Քօսեան, Բարձր Հայք, Բ., էջ 11): Աւանդութեան համաձայն այս այն վերայն է ուր, «յորժամ Տրդատ առաքեաց զԼուսաւորիչն ընկենուլ ի Խորվրայս յԱրտաշատ ի ճանապարհորդութեան յայնմիկ (Ս. Գրիգոր) գիւղեր մի անդ օթեւանս կալաւ» (Ինձիճեան, Նոր Հայաստան, էջ 75):

Երրորդ եկեղեցին կամ մատուցը Ս. Սարգիսի ընծայուած է: Կը գտնուի վանքի

¹² «Ի սնարս արեւելից Մուտուրկայ գիւղը գոցեալ իրեւ գլխոյ ինն մենացեալ եւ բազմեալ ի դահաւորակ բարձր եւ յիշխանապանձ յաթոտ կոտուցեալ է այս մեծատան ի պորտոս չաթայակապ միոյ լեբանց Կարնոյ (Յովհ. Վաղարշակեացի, Ճանապարհորդութիւն, էջ 39):

1587-63



քին հարաւային կողմը եւ դուրս անոր հնա-
գոյն աղօթաւայրը եղած ըլլայ: Ճարտարա-
րուեստական աչքառու բան չունի:

Ս. Լուսաւորչի վանքին ու եկեղեցիին-
բու արձանագրութիւնները դժբախտաբար
նորագոյն շրջաններէ են: Զանոնք կարդա-
ցած եւ հրատարակած է Հ. Քօսեան (Հմմտ.
Բարձր Հայք, էջ 139—150): Սահակ Ահա-
գին Ս. Լուսաւորչի վանքին համար աղբիւր
մը շինած է (Գալիմքեարեան Հ. Գ., Կեն-
սագրութիւն Սարգիս արքեպ. Սարաֆեան,
էջ 240):

Վանքը յիսունի չափ ուխտաւորներու
համար բնակարաններ ունէր եւ ամառնային
շրջաններուն անոնց մէջ եռուն կեանք մը
կը տիրէր: Վանասօր սենեակը լաւ կահաւոր-
ուած էր: Եւ այդ շատ հետեւողական, վասն
զի ժամանակ մը Կարնոյ եպիսկոպոսները
կամ առաջնորդները անոր մէջ կը նստէին:
Վերոյիշեալ սենեակներէն մէկուն մէջ բնա-
կած է Գրիգոր եպ. Կ. Պոլսեցի, իսկ առ որ-
մովք նորաչէն եկեղեցւոյն «մշտական» հան-
գիստը գտած է Սահակ Ահագին Կաթողի-
կոսը» (Յովհ. Վաղարշակեացի՝ Ճանա-
պարհորդութիւն, էջ 39. Մերախորեան,
Ուղեւորութիւն, Բ., էջ 173—177):

Մուտուրկայ Ս. Լուսաւորչի վանքը
Կարնոյ հին վանքերէն նկատուած է (Բիւ-
զանդիոն, 1901, Թ. 1448), սակայն անոր
մասին դժբախտաբար տեղեկութիւններ վեր-
ջին դարերէ են եւ այն ալ դոյզն եւ ոչ այն-
քան կարեւոր¹³:

Ռիմե (1596) թուին կը գրուի Աւետա-
րան մը. «Արդ գրեցաւ սուրբ Աւետարանս ի
յերկիրս Կարնոյ, որ կոչի Արգրում ի վանքս
Մուտուրկու սուրբ Լուսաւորչին եւ սուրբ
Սարգսիս եւ սուրբ Աստուածածնիս եւ մեծ
ազգիս արհաւիրակոյսի տէր Սահակին...
եւ այլ միարանիցս որ աստ կան հաւաքեալ
ամէն: Արդ ես մեղապարտ եւ ամենեցուն
յեանեալ աղաչեմ... յիշեցէք գոտանունն
Ներսէս սարկաւազս...: Գրեցաւ ի թուա-
կանիս Հայոց Ռիմե» (Քօսեան Հ. Յ., Յու-
ցակ հայ. Ձեր Արժնեան վարժարանի, Թ. 6):

¹³ Յակոբ Կարնեցոյ Տեղագրին հրատարակելը՝
էջ 67 գրած է սա ծանօթութիւնը (Թ. 14)՝ «Արգրումի
մաս նշանաւոր հայրանակ գիւղերից մէկն է Կան, որի
մասն է Մուտուրկու վանքը (ըստ տէր Յակոբի Մու-
տուրկու). վանքի եւ գիւղի յարաբերութիւնից կազ-
մուել է ժողովրդական ասածը, որ Արգրումից տարա-
ծուել է եւ ուրիշ տեղեր՝ «Կան կը նստի, Մուտուր-
կան կը հաչէ»:

Այս յիշատակագրութենէն գրեթէ ամ-
բողջ դար մը յետոյ Մուտուրկու վանքին
մէջ երեւան կու գայ Ստամպուլցի Սարգիս
գործօն եւ արդիւնաւոր վարդապետը, որ
խոհեմութեամբ ու խոհականութեամբ կը
շահի վաճառականներու սրտերը եւ անոնց
աջակցութեամբ Ս. Լուսաւորչի վանքը կը
վերաշինէ ու կը բարգաւաճեցնէ՝ «Եւ ունի
քաղաքս եւ երկիրս այս աթոռք երեք՝ առա-
ջին եւ գլուխ է քաղաքիս աթոռ Ս. Լուսա-
ւորչի վանքն, որ Մուտուրկու վանք ասեն,
որ է այժմ միարանակեցայ տեղիք: Ի թուա-
կանիս մերոյ Ռիմե եկն Ստամպուլցի Սարգիս
վարդապետն սուրբ էջմիածնի նուիրակ որ
անդ էր վարժեալ եւ ունէր ձայն անեղ եւ
անուշ, որ եւ հաւանեցոյց զքաղաքս եւ եր-
կիրս ճարտար քարոզութեամբն իւրով եւ
կպիսկոպոսն Ղազար իւրովի կամօքն հրա-
ժարեցաւ եւ ետ գնա ի վանքն եւ նա դար-
ձաւ առ կաթողիկոսն Փիլիպպոս եւ էառ
հրաման նստիլ մեծագահ աթոռն Թէոդու-
սոյսի եւ եկեալ արար բազում չէնք եւ շի-
նուածք ձեռնառութեամբ քաղաքիս եւ վա-
ճառականացն եւ յոյժ աշխատութեամբ երեք
շուր եւ եհան ի դուռն վանացն աղբիւր եւ
ջաղացք եւ այլ ուղղութիւնս եւ կարգս ա-
րար ի վանքս...» (Յակոբ Կարնեցի, Տե-
ղագր. Վեր. Հայոց, էջ 43):

Ինչպէս կը տեսնուի Ղազարի գործու-
նէութիւնը միակողմանի չէ եղած: Նա շի-
նարարութեամբ միայն չէ հետաքրքրուած,
այլ եւ գուցէ աւելի բունն եռանդով «ուղ-
ղութիւնս եւ կարգս» ըրած է վանքին մէջ:

1664ին Չաքարիա Քանաքեղոցին «ի քա-
ղաքին Կարնոյ ի վանս Սուրբ Լուսաւորչին»
կը գաղափարէ Գործք Առաքելոցի մեկնու-
թիւնը եւ կը յիշէ «գառաջնորդ Լուսաւորչի
վանացս զՍարգիս վարդապետն, որ այժմ
յերկիրն Պարսից ի գործ նուիրակութեան
սակս սուրբ Երուսաղէմի, եւ նորին աշա-
կերան եւ զեղբայր մեր զՊետրոս վարդա-
պետն...» (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յի-
շատ. Ձեռ. էջմիածին, Թ. 140):

Յաւալի է որ չունինք տեղեկութիւն թէ
Սարգիս վարդապետը Ս. Լուսաւորչի մէջ
ի՞նչ ձեռնարկ ըրած է: Նմանապէս անծա-
նօթ կը մնան անոր նախորդներէն եւ յա-
ջորդներէն շատերու անունները եւ արդիւնք-
ները: Անոր օրովը — 1667 — «Գրեցաւ Աւե-

տարանս ի քաղաքն Կարնոյ, ի դուռն Ս. Լու-
սաւորչին, ի յառաջնորդութեան աստուա-
ճարան Տեառն Սարգիս քաջ բարունապե-
տին» (Ակինեան, անդ էջմիածին, Թ. 245.
Հմմտ. Կարնեան, Մայր ցուց. էջմ.,
Թ. 332):

Երկու տարի վերջը Նահապետ գրիչը
Մուտուրկու վանքի մէջ կը շարունակէ ար-
տագրութիւնը Աւետարանի մը, գոր ուրիշ մը
սկսած է (Ակինեան, անդ, Հ. Պատուրեանէ):
Իսկ 1672ին կը նորոգուի «ի դուռն Մու-
տուրկու վանից, որ յանուն Ս. Լուսաւորչին
կառուցեալ է, Աւետարան մը (Քօսեան
Հ. Յ., Բարձր Հայք, Բ., էջ 148): Տաս
տարի յետոյ Յովհաննէս դպիր Խորհրդա-
տետր մը Ս. Լուսաւորչի վանքին յիշատակ
կը թողու (անդ, էջ 149): Երկարատեւ լու-
թիւնէ ետքը կը հանդիպինք Խաչատուր վար-
դապետի՝ «Աւետարանս յիշատակ է...:
Ի դուռն Մուտուրկու սուրբ Լուսաւորչի վա-
նից» ի ձեռն առաջնորդ Խաչատուր վարդա-
պետին» (Բարձր Հայք, Բ., էջ 149):

Սոյն առաջնորդը դեռ կը յիշուի՝ «Եղև
զբաւ զբեցման հատորիս ընթիւնն ՌժՎԻ
(1715) Փետրվարի ներ տասնում եւ քառով:
Ի խնդրոյ Տեառն Խաչատուր աստուածա-
բան վարդապետին Կ. Պոլսեցոյ, որ եւ շնոր-
հօք վերատեսուչ եւ առաջնորդ է այժմ աս-
տուածաչէն մայրաքաղաքիս Թէոդուսոյս
ի Լուսաւորչի վանիցն: Դարձեալ յիշես-
ջիք... միարան սուրբ ուխտիս Սարգարէ
կպիսկոպոսն եւ Մակար վարդապետն եւ
Մարտիրոս վարդապետն եւ Երեմիայ վար-
դապետն: Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս
զՄակար վարդապետն, որ բազում աշխա-
տութեամբ կազմեաց զերկու քարոզչութիւնս...:
Աղաչեմ յիշել զԽաչատուր աստուածարան
վարդապետն, զի յոյժ քաղցր է եւ հեղահոգի
եւ ջատագով ճշմարտութեանն Լուսաւորչա-
կանի ուղղափառ դաւանութեան ամէն: Եւ
զիս զԹէոդորոս գրիչս յիշել մախթեմ... եւ
զեղբայրն իմ Տէր Թումաս հեղահոգի քա-
հանայն եւ զԴնոզան իմ Գասպարն եւ Նազլուն
եւ հօրեղբայրն իմ տէր Պաղտատարն...»
(Ակինեան, Հաւաք. Յիշատ. էջմ. 2106):

Ինչպէս կը տեսնուի Ս. Լուսաւորչի
բաւական լաւ վիճակի մէջ է: Հոն՝ «Ի վանս
Ս. Լուսաւորչին» 1719ին Թէոդորոս վար-
դանի Երգ Երգոցի մեկնութիւնը կը գրէ
(Ակինեան, Հաւաք. Յիշատ. Երեւան, 830):

Քանի մը տարի յետոյ սոյն վանքին Աւետա-
րան մը յիշատակ կը տրուի՝ «Յիշատակ է
սուրբ Աւետարանս Արգրումցի Թագոչենց
Փիլոսի որդի Մուրատին եւ մօրն ի դուռն
Մուտուրկու սուրբ Լուսաւորչի վանքին...
թվին ՌժՎԻ¹⁴» (Ակինեան, Հաւաք. Յիշատ.
Երեւան, 94):

ԺԸ. դարուն երկրորդ կիսուն Կարնոյ եւ
Ս. Լուսաւորչի առաջնորդն է Աւետիս վար-
դապետը, որ նաեւ հետեւեալ յիշատակա-
գրութեան մէջ կը յիշուի՝ «Արժաթապա-
տեցաւ եւ գնեցաւ սուրբ Աւետարանս ձե-
ռամբ Կարնոյ առաջնորդ Աւետիս աստուա-
ճախմաստ վարդապետին սրօք հաւասար
ժողովրդեան եւ եղաւ յիշատակ Մուտուր-
կու սուրբ Լուսաւորչի վանիցն, ի թուակա-
նութեան Հայոց ՌՄ եւ Ե (1756) եւ յամ-
սեանն Ապրիլի սկիզբն» (Ակինեան Հ. Ն.,
Հաւաք. Յիշատ. Ձեռ. Երեւան, Թ. 157):

Սիմէոն Կաթ. Երեւանցին Մուտուրկու
վանքը «տէրունի» կը ընէ (Աղայեանց, Դիւան,
Ը., էջ 377) եւ նամակ մը կը գրէ «առ Կար-
նոյ առաջնորդ Յարութիւն պետն՝ վասն ան-
ցիցն Մուտուրկու վանիցն...: Ձի ի վանսն
Մուտուրկու տաճիկ ոմն գաղտ յարուցեալ
ի վիշերի՝ զհայ ոմն սպանեալ էր, գոր իմա-
ցեալ փաշայն, զմիարանսն վանիցն ըմ-
բրանեալ, ի բանտ էր արկեալ, եւ գլովով
զբամս խնդէր ի նոցանէ...» (անդ,
էջ 464):

1806ին եւ 1824ին երկու Աւետարան
Մուտուրկու վանքին յիշատակ կը տրուի
(Բիւզանդիոն, 1906, Թ. 2897, եւ Քօսեան
Հ. Յ., Բարձր Հայք, Բ., էջ 149): 1840ին
Լուսաւորչի եւ Խաչկայ վանքերու առաջնորդ
կը նշանակուի Եփրեմ վարդապետը (Թ. 703
Ձեռագիր Վիեն. Միթիթարեաններու Մատե-
նագրին, էջ 227): Իսկ 1877ին Ներսէս
վանահայրը աւագակներու ձեռքը կ'իյնայ եւ
կը զանահարուի (Փունջ, 1877, Թ. 1146):

Քաղաքական եւ կառավարական յարա-
բերութիւններու հետեւանքով Մուտուրկու
վանքը Կարնոյ առաջնորդարան միշտ չի
մնար: Առաջնորդները նպատակայարմար կը
տեսնեն քաղաքին մէջ հաստատուն բնակա-
րան եւ պաշտօնատեղի ունենալ:

¹⁴ ՌժՎԻ թուին առաջնորդ կը յիշուի Ներսէս
վարդապետը (Քրիստոս հրատ. Արաթանդեղոսի,
Տիգրիս 1909), էջ 107:

Գրիգոր Լուսաւորչի տօներուն եւ ուրիշ առիթներուն՝ Մուսուրիու վանքը ուխտաւորներու հոծ բազմութիւն մը կը ընուր: Հարուստ էր հողով ու կայուածով: Ունէր 15 թեմական զիւղ (Քօսեան Հ. Յ., Բարձր Հայք, Բ., էջ 149—150, Բիւզանդիոն, 1898, Թ. 501, 1900, Թ. 1066, 1901, Թ. 1448, Բազմավէպ, 1907, էջ 473, Էփրիկեան, Բնաշխ. Բորն, Բ., էջ 112):

8. Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՎԱՆՔԸ

Կարնէն երկուքուկէս ժամ հեռու Օձնի գիւղի մէջ, որմէ կոչուած Օձնի Ս. Յովհաննէս: Աւանդութիւնը անոր հիմնադիրը կ'ըզէ ճանչնալ Յովհան Իմաստասէր կամ Օձնեցի կաթողիկոսը, որ սակայն ճշմարտութեան չի համապատասխաներ (Բիւզանդիոն, 1900, Թ. 1001 եւ 1901, Թ. 1449):

Հ. Քօսեան Օձնի մէջ գիւղի մատուռ մը՝ նուիրուած Յովհան Օձնեցիին (Բարձր Հայք, Բ., Կարնոյ գիւղերը, էջ 21—23): Չայն Պաւլեան վանք կ'անուանէ (Բիւզանդիոն, 1900, Թ. 1001 եւ 1901, Թ. 1448):

9. Ս. ՍԱՐԳԻՍԻ ՎԱՆՔԸ

Կարնոյ մերձ: Ստուգապէս չէ կարելի ըսել՝ ո՞ր տեղ: «Ի վաղուց անցած է ի շարս ամայացեալ հայ վանօրէից» (Բիւզանդիոն, 1900, Թ. 1019 եւ 1901, Թ. 1448):

10. ԲԱՌԱՍՈՒՆ ՄԱՐՏԻՐՈՍԱՅ ՎԱՆՔԸ

Կարնոյ մօտ հին վանք մը: Պրոկոպիոսի վկայութեան համեմատ զայն Յուստինիանոս կայսրը նորոգել տուած է (Հմմտ. Ինճիճեան, Հնարասութիւն, Գ., էջ 212 եւ Հանդ. Ամսօրեայ, 1891, էջ 143): Այս վանքի մասին այլուր:

Գ.

ԴԵՐՁԱՆԻ ՎԱՆՔԵՐԸ

Դերջան սահմանակից է Կարնոյ, Ստորին Կեղիի, Խաղաեաց լեռներու եւ Երիզայի¹: Սակաւաթիւ են իր վանքերը եւ

¹ Երզնկայի, Քէմաիի, Դերջանի, Կարնոյ, Բարեղի (եւ նաեւ Քղիի) վանքերու մասին Հմմտ. Տրդատ Վ. (եղ.) Պալեանի յօդուածաւարքերը՝ Բիւզանդիոն, 1902, Թ. 1538, 1614, 1644, 1680, 1720, 1831. անդ, 1901, Թ. 1448, 1500, 1502, 1521 եւն եւն:

պատճառը յայտնի, վասն զի կրօնական կըրթութիւնը հոն շատ մեծ զարգացում չգտաւ: Թէեւ Գրիգոր Լուսաւորչի գործունեութեան վայրերէն է:

1. ԱԻԱԳ ՎԱՆՔԸ ԿԱՄ ՊՂՆՁԱՅԳԻՈՅ ՎԱՆՔԸ

Յակօր Կարնեցիին կը գրէ՝ «Եւ արեւմտից կողմն են դաւառք զարմանալիք առաջինն Հայք որ այժմ Դերջան ասեն... եւ ունի զիւղաքաղաք զԲագաւիճ առ յափն Եփրատայ եւ ունի վանս Բ. որ է այժմ տեղի միարանակեցաց. մինն է անքոյթ ի բարձրավանդակ տեղով, որոյ անունն Պղնձագոյն անապատ ասեն եւ միւսն է հիմնարկեալ ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէն՝ եղեալ մասն սրբոյն Կարապետին (Տեղգր. Վեր. Հյց., էջ 10—11):

Ոմանք այս վանքը ուզած են Սպերի Ս. Յովհաննէսի կամ Տղանց վանքերու հետ միացնել (Հմմտ. սոյն վանքերը): Կարելի է զայն Բարեղի վանքերու շարքին մէջ եւս դնել:

Բաւական հին վանք է: Անոր անուան կը հանդիպինք քանի մը անգամ. 1310ին գրուած Ձեռագրի մը յիշատակարանին մէջ կայ՝ «Դաւիթ արեղայ ի Պնճավանս» (Ծագիկ, 1891, էջ 15):

1314ին կը յիշուի տէր Սահակ. «Ի թվիս Հայոց ԶԿԳ (1314) ես տէր Սահակ եպիսկոպոս առաջնորդ Աւագ անապատի Պղնձագոյ, որդի սարոն Կիրակոսի աւետիք արարի զսուրբ Աւետարանս Մարտիրոս քահանայի» (Քօսեան, Յուց. հայ. Ձեռ. Կարնոյ գիւղերու, Դիւիկ, Թ. 6): Ապա դեռ կայ՝ «Այլ իմ ձեռաց գիր է Սահակ եպ. Բարեղիցոյ»:

1316ին գրուած Աւետարանի մը յիշատակարանին մէջ կ'ըսուի՝ «Եւ այնպիսի դատնութեան կայաք եւ սուրբ ուխտն մեր աւերեցաւ անապատն Պղնձագոյ եւ ցրուեցան ամենայն սպասաւորք եկեղեցոյն (Բիւզանդիոն, 1902, Թ. 1831):

1451ին «Գրեցաւ սա (Աւետարանս) ի սուրբ եւ հոգաւոր ուխտս Պղնձագոյ Աւագ անապատս ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս եւ սուրբ Կարապետիս եւ սուրբ Լուսաւորչիս եւ սուրբ Սարգսիս եւ սուրբ Նշանացս եւ սուրբ Նշխարացս... ի կաթողիկոսութեան Հայոց Տեառն Գրիգորի եւ յեպիսկոպոսութեան տէր Աւետեաց վերադատողի Դերջան եւ Բարեղոյ: Յիշեցէք ի

Քրիստոս... գառաջնորդն զտէր Աւետիս, զհարպեան Մատթէոս արեղայն, զՍարգիս արեղայն, զվանից վարպետն, որ խիստ ի ժամատեղն կու շարչարի ի յասելն եւ զայլ արեղայքն եւ զգործաւորքն, որ յանուանէ ձանձրացայ գրել» (Լաւրյեանց, Յուց. հայ. Ձեռ. Վասպ., էջ 407—408). գրիչն է՝ Մովսէս արեղայ:

Շատ ժամանակ է ի վեր շարաթացած է այս վանքը (Տաճար, 1911, էջ 305):

2. ԳՈՐՈՐՈՒ Ս. ԹԷՌԳՈՐՈՍԻ ԿԱՄ Ս. ԹՈՐՈՍԻ ՎԱՆՔԸ

Երզնկայի եւ Դերջանի գաւառներու միջեւ՝ Խնձորիկ գիւղի լեռնադաշտի վրայ, Սեղեմնուտ ապառաժուտ ձորախայրին մէջ բարձրացած է Ս. Թէոդորոս Սարահունիի նուիրուած վանքը, որ կոչուած է Սեղմնուտի կամ Գորորու (կամ Գորարու) կամ Սըրբըլը Ս. Թորոսի կամ Թէոդորոսի վանք (Ինճիճեան, Նոր Հայաստան, էջ 97. Ղազանճեան, Խառն Նամակներ, էջ 33, Հայրենիք, 1887, Թ. 1338, Բիւզանդիոն, 1900, Թ. 1043, Արեւելք, 1900, Թ. 4309): Եկեղեցին փոքր է: Անոր դուռը օժտուած է սաարձանագրութեամբ. «Յիշատակ է այս գուռը Սր. Թէոդորոսին թվին. ՌՄՃԺԳին» (Սիւրմէնեան, Երզնկա, էջ 101): Տաճարին մասունքն է Ս. Թէոդորոսի լեզուն, որ ձողիմը վրայ անցուած է եւ զայն իրբեւ թէ յետոյ Գրիգոր Դարանաղցին Ռոտոսթոյ տարած ըլլայ, մինչ զեռ անիկա սոյն քաղաքը փոխադրած է Քրիստոսի Խաչափայտին բեւեռներէն մին (Հմմտ. նոյնին ժամանակագրութեան յառաջարանը. Երուսաղէմ 1915, էջ ԾԲ—Կ): Աւանդութիւնը վանքին հիմնադիրը կը հռչակէ Գրիգոր Լուսաւորիչը:

Միթէ ա՞յս վանքը կ'ակնարկուի Հետեւեալ յիշատակագրութեան մէջ, որ 1433ին գրուած Յայրմաւորքի մը մէջ կը գտնուի՝ «Աւարտեցաւ քրիստոսաշնորհ մարգարտաշար տառս այս ի թվականիս Հայոց ՊՁԲ եւ Մայիս ԻԶ ընդ հովանեաւ սուրբ Թէոդորոսի մեծափառ եւ բարձրապատիւ եւ սուրբ Աստուածածնի եւ սուրբ Սարգսի եւ սուրբ Յակոբայ կենաց բարեխաւսի եւ այլ սուրբ նըշխարացս եւ սուրբ նշանացս, որ սաս կան հաւաքեալ: Արդ ազաչեմք գամենեանս յի-

շել յաղաւթս... զհայր վանացն Չաքարէ արեղայն եւ զճնաւդան իւր եւ զայլ սպասաւոր սուրբ ուխտիս միարանքն, զՄարտիրոս հին հայրապետն, եւ զՅովսէփն եւ զԿիրակոսն եւ զՎարդանն եւ զՊետրոս եւ զԱստուածատուր արեղայքն եւ զՄկրտիչ երէցն, որ մեկ սիրով սէր արարին եւ զգործաւոր վանիցս զՄկրտիչ տնտես եւ զերկու Յակօրն եւ զՅովհաննէսն եւ զԳրիգորն եւ զԼուսաւորոն եւ զԽաչատուր եւ զՍիօն սարկաւագերն (Արարեալ, 1905, էջ 734—735):

Պաւլեան կը կարծէ թէ ուրիշ յիշատակագիր մըն ալ այս վանքը կ'ակնարկէ, երբ կը գրէ՝ «...Ով քահանայք եւ ժողովուրդք, որք միարան եւ պողատու էք սուրբ ուխտիս, որ կոչի սուրբ Թորոս» (Բիւզանդիոն, 1902, Թ. 1831):

Ս. Թորոսի — վերջին շրջաններէ — վանահայր եղած են՝ Եփրեմ վարդապետ եւ Մարկոս վարդապետ, որ կոնդակ մը գրած է եւ տէր Սարգիս, տէր Պօղոս ու տէր Վահան (Սիւրմէնեան, Երզնկա, էջ 101):

Ս. Թորոսի վանքը սիրուած եւ այցելուած ուխտատեղի եղած է, մանաւանդ Համբարձման Հինգշաբթիին եւ Պենտեկոստէի Կիրակին ամէն կողմէ ուխտաւորներ հոն կը խուժէին. «վանքին ուխտի օրը Պենտեկոստէի տօնին էր, այդ օրն էր որ վանքին աւանդական ձողը (սըրբը) կը հանուէր եւ վանքին բակին մէջ տնկուելով... վանականներէն մէկը անոր վրայ կը մագլցէր եւ զանազան խաղեր կ'ընէր: Ասկէ է վանքին Սըրբըլը անուանակոչումը: Բայց թէ ո՞ր ժամանակէն սկսած է այս սովորութիւնը եւ ի՞նչ է անոր նշանակութիւնը՝ ոչ ոք գիտէր»: (Սիւրմէնեան Գ., Երզնկա, էջ 101: Վանքին մասին տեսնել զեռ Չամչեան, Պատմ. Հյց., Ա., էջ 379. Այիշան, Յուշիկը Հայրենեաց, Ա., էջ 237—238, Յակօր Կարնեցի, Տեղագիր վերին Հայոց, էջ 63, Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 21—22 եւ նոյնը՝ Նոր Հայաստան, էջ 97, Հայրենիք, 1887, Թ. 2338, Փարոս (Յրեգնո) 1930, էջ 116. Հմմտ եւ Թուրիկեան Գ., Եփրատեան Հայաստան, Քղի եւ շրջ. դաւառները, Ա., էջ 80 եւ 110):

Ս. Թորոսի վանքը տրամադրելի բաւական հող ունէր (Բիւզանդիոն, 1900, Թ. 1043 եւ 1902, Թ. 1831, 1902 եւ Յառաջ, 1911, Թ. 39):

3. Ս. ԳՐԻԳՐԻ ԿԱՄ ԱՊՐԱՆԻՑ Ս. ԳՐԻԳՐԻ ԿԱՄ ԵԱԿԻՍՏՐՈՍ ՎԱՆՔԸ

Դերջանի այս բազմանուն վանքը, որ կանգնած է Հէօպէկ լեռան բարձունքը մնացած է ամէն խնամքէ զուրկ. հաւանականաբար հեռու ըլլալուն եւ զիւրամատչելի չըլլալուն համար: Թէեւ չէնքով հոյակապ չէ, բայց տեսարանով հիանալի: Ունի մատուռ մը՝ մէկ խորանով եւ շինուած է յանուն Դաւիթ անուն անձի մը, որուն գերեզմանը կը ցուցուի հոն (Արեւելք, 1903, Թ. 5355, Բիւզանդիոն, 1900, Թ. 1158, 1902, Թ. 1831):

Գուցէ այս վանքը եւ կամ Խլաձորի Ս. Գրիգորը կ'ահնարկէր Յովհ. Երզնկացին, երբ կը գրէր. «Գոտայ եւ յանապատն Դերջանայ զՀամամայ Արեւելից վարդապետի մեկնութիւն» (Ալիշան, Հայապատում, Գ., էջ 78): Ինճիճեան Ս. Դաւիթ վանքին համար կը վկայէ թէ «է երեւելի մենաստանի գաւառիս» (Նոր Հայաստան, էջ 96): Կոչուած է նմանապէս Ծակքարի, Ծաղքարի, Կոթերի եւ նաեւ Ապրանից Ս. Դաւիթ վանք, նկատելով այն գիւղերը, որոնց մերձ կառուցուած է: Թերեւս անուանուած ըլլայ նմանապէս Ապրանից Ս. Գրիգոր, եթէ վերջինս տարբեր վանք չըլլայ: Վերջնոյ մասին ունինք հետեւեալ տողերը՝ «Իսկ... ի թուականիս մեր ՁԼԷ (1488) եղև աստուածասաստ բարկութիւն ի վերայ Ազարուք անուն գեղջին, որ ի նահանգին Դերջնոյ մերձ ի Կոթերոյ, մօտ ի վանքն լուսաւորչակոտոյց, որ սուրբ Գրիգոր յիւր անուն հիմնարկեաց եւ օծեաց որ այժմ Ապրանից վանք ասի: Ձի չար Սօփիքն բնակեալ էին ի գեօղն յԱզարուք եւ կոչէին Շեխնոց եւ Սոփէնոց եւ բազում նեղութիւնս անցուցանէին ընդ արեղայսն եւ կտրէին հանապաղ զՎուրս վանացն եւ ոչ տային թոյլ հազել նոցա» (Ակինեան, Յիշատակարանք, էջմ. 991. ուրիշ խմբագրութեամբ՝ Սարգիսեան, Մայր Յուց., Բ., էջ 1160. տե՛ս ուրիշ յիշատակագրութիւն մը Դարանաղեաց Աւագ վանքի մասին գրած յօդուածիս մէջ):

Ս. Դաւիթի վանքը ունեցած է շատ հոգ եւ անտառ (Յատալ, 1911, Թ. 39): Օժտուած է խաչքարերով, որոնց արձանագրութիւնները շատ սակաւ տեղեկութիւններ կը բովանդակեն (Փունջ, 1902, Թ. 2800):

² Եղած է աստիճանադարան (Արեւելք, 1903, Թ. 5173):

4. ԽԼԱՁՈՐԻ Ս. ԳՐԻԳՐԻ ՎԱՆՔԸ

Հայաստանի մէջ Ժ. դարուն հիմնուած հայկական վանքերէն է: Շինուած Դերջանի եւ Բարերգի միջեւ (Բիւզանդիոն, 1900, Թ. 1060 եւ 1902, Թ. 1831):

«Ասողիկի գրչէն հասած են հետեւեալ տողերը՝ «Նոյնպէս եւ ի գաւառին Դերջանայ Խլաձորին անուանեալ վանք, որ ըստ վկայարանի նորին սուրբ Գրիգորի կոչի ի ձեռն Սիմօնի («Սիմօնի») հիմնեցեալ... որ ի սահմանս անախտութեան հասեալ վախճանի ի կենացս փոխանակ իւր թողլով վերակացու ուխտին գՊետրոս ծերունին, որ ի տուէ եւ ի գիշերի աշխատէր ի մշակութիւն Տեառն գործել ձեռօք եւ սաղմոսել բերանով ցայգատարած բազկատարածութեամբ արտօսելիցոյց ողբովք լցեալ գաւուրս: Որոյ ի ծերութեան վատեալ աչացն յընտրութենէ ամենեցուն տայ գառաջնորդութիւնն հօրն Բարսղի, որ ընդ ամենայնի ամենայն եղև, գամենեցուն ընու գոյակասութիւն եւ զվերակացութիւն գիտնական եւ իմաստական հանձարով...: Առ որ ժողովեալ բազմութեան արանց արդարոց ճշնագրեատ, խոնարհազարդ վայելչութեամբք, զարդարեալք ի ճաշակս անճաշակ, միանգամ միայն յաւուր ճաշակեալ եւ զովացեալ ջրով ի շարաթու եւ կիւրակէի արրմամբ յաւուրս սուրբ քառասնորդացն: Առ որս եղեալ իմ յաւուրս սուրբ քառասնորդացն զրեցի զրանս յիշատակիս այսորիկ սակաւուք եւ զչափ ժամանակացս թուեցի ըստ կարի» (Պատմ., էջ 174—175):

Խլաձորի վանքը հրդեհի նմանած է: Աճեր է շուտ եւ մարած է շուտ: Այսքան սակաւ են այս հոչակաւոր վանքի մասին մեր տեղեկութիւնները, սակայն անոնք շատ բան կ'ըսեն (հմմտ. Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 25 [86]. Չամչեան, Պատմ. Հայոց, Բ., էջ 804. Հիւրչման, Հին Հայոց տեղւոյ անունները, էջ 353 եւ Էփրիկեան, Բնաշխ. Բառարան, Ա., էջ 565. Բիւզանդիոն, 1902, Թ. 1831):

5. Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ԿԱՄ ՇՈՂՈՒՆԻ ՎԱՆՔԸ

Ս. Կարապետի վանքը Դերջանի Շողուն գիւղի մէջ է եւ կոչուած է նաեւ պարզապէս Շողունայ վանք: 1902ին իր եկեղեցին դեռ կիսովին կանգուն էր եւ սիրուած ուխտատեղի էր, որովհետեւ հոն կը գտնուէին Ս. Կարապետի նշխարներէն: Վանքին հիմ-

նագիրը նկատուած է Ս. Գրիգոր Լուսաւորիչ: «Ի յանուն Դերջանայ սուրբ Կարապետ վանաց շինութեան աղագաւ եւ կարմիր մոնրով կնքեալ յանուն եպիսկոպոսի վանացն» Յովհաննէս անուն մէկը ժողովարարութեան կ'ըլլէ (Գր. Դարանաղցի, Ժամանակագրութիւն, էջ 482. Յակոբ Կարնեցի, Տեղ. Վեր. Հայոց, էջ 11. հմմտ. Մենաւոր Ս. Կարապետի վանքը):

Ս. Կարապետի վանքը — թէեւ հոն Մալար վարդապետը քանի մը սենեակ կը շինէ — արդէն շատոնց շարաթացած է եւ հողերուն գիւղացիները տիրացած են (Բիւզանդիոն, 1902, Թ. 1831 եւ Փունջ, 1902, Թ. 2802):

6. Ս. ՅՈՎՀԱՆՆԵՍԻ ՎԱՆՔԸ

Դերջանի Ապրանք գիւղը — Հէօպէկ լեռան ստորտը եւ բարձունքը — (Կոթեր գիւղի մերձ) ունէր երկու վանք — Ս. Յովհաննէս եւ Ս. Դաւիթ (հմմտ. վերը):

Ս. Յովհաննէսի վանքը (կամ Ս. Օհանի վանքը) Հէօպէկ լեռան ստորտը շինուած է եւ պարսպապատ է: Պարսպին վրայ արձանագրուած է՝ «Ողորմութեամբն Աստուծոյ շինեցաւ վանքս արդեամբ բարեպաշտ ժողովըրդեան յառաջնորդութեան Մկրտիչ վարդապետին Արծրունեաց ՌՅ, 1850 Մ. վ.»: Իսկ վանքին դրան վրայ կայ՝ «Եփրեմ վարդապետ աշխատաւոր, նախ Գրիգոր Լուսաւորչի կառուցեալ գտաք աստ փոքրիկ մատուռ մի անուամբ սրբոյն Օհաննու Մկրտչի եւ մեք նոյն անուամբ շինեցաք ս. եկեղեցին 1854»: Սոյն Մկրտիչ 1893ին մեռնելով թաղուած է վանքին ձախակողմեան պահարանին մէջ:

Եկեղեցին գեղեցկաչէն է եւ ուխտատեղի: Հոն պահուած են Յովհ. Մկրտիչի եւ Պարսամ ճղնաւորի մասունքներէն (Արեւելք, 1903, Թ. 5355, Բիւզանդիոն, 1900, Թ. 1831):

Ս. Յովհաննէսի վանքը շատ հարուստ էր՝ շարժուն եւ անշարժ գոյքերով ու կալուածքներով (Արեւելք, 1896, Թ. 3614 եւ 1903, Թ. 5430):

7. Ս. ՍԱՐԳԻՍԻ ՄԵՆԱՍՏԱՆԸ ԿԱՄ ՄԱՍԷՔԻԱՅԻ ՄԵՆԱՍՏԱՆԸ

Կոթերի եւ Խարխինի մերձ է՝ «Ս. Սարգիս եկեղեցին, որ էր ժամանակաւ Աստուածատուր Պատրիարքի ուսուցիչ Տէր Մա-

ղաքիս վարդապետի մենաստանը» (Արեւելք, 1903, Թ. 5355): Հոն կը գտնուին հետեւեալ արձանագրութիւնները՝ «Նորոգեցաւ սուրբ եկեղեցին թուին ՀԳ (°) ձեռամբ Մաղաքիս վարդապետի» եւ «Ի թուին ՀԶԹ (°) մեծ կամուրջին կապեց ձեռամբ Մաղաքիս վարդապետի եւ Յէրհատ փաշայի ի թագաւորութեան սուլթան Սուլէյմանի, որ թագաւորէր յԱզրիանուպոլիս» (անդ):

(Շարունակելի): 2. 2. ՈՍԿԵԱՆ

ԵՓՐԵՏԻ ՍԸՀՄԵՆԵԿԼՈՒԹԻՐ ՊՈՄՊԻՈՍԻ ԺԵՄԵՆԵԿԻՆ ՄԻՆՉԵՐ ԵՐԵՐԵՏԻՈՑ ԸՅԵԱՐՀԵԿԵԼՈՒԹՈՒՆԸ

(Շարունակութիւն):

Ջօրանիստներու ուսումնասիրութեան մէջ տեղ մը տալու ենք հետաքրքրական գիտողութեան մը. պէտք ենք մատնանիշ ընել հոմէական ոյժերու դանդաղ՝ բայց անընդհատ յառաջխաղաց թափանցումը: Ի սկզբան լեզուններու ընդհանուր բնաղիւրները կը գտնուին Անտիոքայ կողմերը՝ Լաւոզիկէ, Կիւրբա, եւ Աղեքսանդրեակ (°) 60: Հրէական ապստամբութիւնները, Հայաստանի կողմանէ եղած յարատեւ դժուարութիւնները պատճառ կ'ըլլան՝ իրենց հաւասարակշռութեամբ՝ որ այս գլխաւոր առանցքն իւր տեղը պահուի, բայց նաեւ առիթ կ'ըլլան որ շատ մեծ հեռաւորութեանց վրայ ալ իրական եւ տեւական գորապահութիւն մը կատարուի. Երուսաղէմ եւ Մելիտենէ գորանիստ քաղաքներ կ'ըլլան. սակայն մեծ միութիւնները տակաւին ճովկեղերքին բուական մօտերը կը թողուին. Լեջուն ճովափէն միայն քան մղոն հեռու է, Հոսփնէ գրեթէ նոյնպէս. Մելիտենէի ետեւը կը մնայ Սատաղայի բանակալարը. Գ Գաղղիակաւը Փիւնիկէ կը մնայ: Բայց յետոյ աւելի յառաջ կը խաղացուի. լեզուն մը կը հաստատուի ի Բոստրա, եւ ուրիշ մը կը հաստատուի Շամշատի մէջ:

⁶⁰ Իրբև յուելուած նշանակենք թէ Աւգուստոսի ժամանակ Ը Աւգուստամ (VIII Augusta) լեզունին հնօրեայ վաստակաւոր զինուորները հաստատուեցան ի Բերթա (Դիոն Կաս. ԾԱ, 9. հմմտ. Ստրաբ. ԺԶ, 2. 19, էջ 576 C. Eckhel, D. N. V., III, p. 356. հմմտ. Waddington, 1827 էւ 3699):

⁶¹ Չմտնանք թէ ժԲ Շմիթալարը հոս խաւրուած էր իբր տեսակ մը պատիժ: